5 հունիսի 2019
Երևան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Պետական գույքի կառավարման կոմիտեի Պետական գույքի տնօրինման վարչության Պետական գույքի օտարման բաժնի փորձագետ Աննա Ակտարյանի կատարած աշխատանքների վերաբերյալ՝ փետրվար-մայիս ամիսների համար

Համաձայն կնքված պայմանագրի (N8) դրույթների իրականացվել եմ ստորև նշված աշխատանքները.

Կոմիտեի աշխատանքում, Հանրային-մասնավոր գործընկերության մեթոդի հնարավոր կիրառման նպատակով, կոմիտեի կարողությունների գնահատման համար աջակցության դիմումի համար, հավաքագրվել եմ տեղական ՀՄԳ-ն առընչվող գործող և քննարկման փուլում գտնվող փաստաթղթերը, առկայության դեպքում դրանց թարգմանությունները, մինչև օրս ՀՀ-ում իրականացված ՀՄԳ օրինակները և այլ առընչվող նյութեր:

Ուսումնասիրել եմ արտերկրյա փորձը, դուրս եմ բերել ՀՄԳ կիրառելի մոդելները՝ Կոմիտեի աշխատանքում կիրառելու համար:

Կատարել եմ ուսումնասիրություն ՀՄԳ ծրագրերի համար անցկացվող մրցույթների, դրանց արդյունքների գնահատման վերաբերյալ, կատարել եմ առաջարկություններ՝ մասնավորապես ճարտարապետական և բնապահպանական հանձնախմբերի ստեղման և կշռային գործակիցներով գնահատման կիրառման վերաբերյալ:

Ք. Երևանի Սարմեն 1 շենքի վերանորոգման աշխատանքների նախագծային փաստաթղթերի կազմման աշխատանքների և գնման գործընթացը կազմակերպելու նպատակով, ներգրավվել եմ իբրև պատասխանատու ստորաբաժանման անդամ:

Պատրաստել եմ օտարման ենթակա գույքի փաթեթներ, ինչպես նաև վաճառքի կամ վարձակալության նպատակով հանրությանն իրազեկման համար ներկայացվող նյութեր: Աշխատանքային գործունեության ընթացքում մասնակցել եմ պետպատկան տեղազննման աշխատանքներին:

Պետական գույքի կառավարման կոմիտեի Պետական գույքի տնօրինման վարչության
օտարման բաժնի փորձագետ Աննա Ակտարյան

/ստորագրություն/

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Պետական գույքի կառավարման կոմիտեի պետական գույքի տնօրինման վարչության Պետական գույքի օտարման բաժնի ներգրաված փորձագետ՝ **Աննա Ակտարյանի** կողմից 2019 թվականի փետրվարից մինչև մայիս իրականացրած աշխատանքները գնահատվում են դրական:

Պետական գույքի կառավարման կոմիտեի
Պետական գույքի տնօրինման վարչության պետ
Ռոման Մարդոյան

/ստորագրություն/

Պետական գույքի կառավարման կոմիտեի Պետական գույքի տնօրինման
վարչության Պետական գույքի օտարման բաժնի պետ
Ալբերտ Գասպարյան

/ստորագրություն/

«06» 06 2019թ.